

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՀԻՂՐՈՂԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹ-  
ՆԵՐԻ ՎՐԱ ԱԿՏԻՎ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ  
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2018-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ  
ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ  
ՀԻՂՐՈՂԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿԸ

1. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ լիազոր մարմին) «Հիդրոդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ հիդրոմետ ծառայություն) կողմից 2018-2020 թվականների ընթացքում կատարման ենթակա պետական նշանակության հիդրոդերևութաբանական աշխատանքների ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) մշակվել է «Հիդրոդերևութաբանական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության (այսուհետ՝ ՀՕԿ) կոնվենցիայի, Անկախ պետությունների համագործակցության (այսուհետ՝ ԱՊՀ) «Հիդրոդերևութաբանության բնագավառում փոխգործակցության մասին» և «Անկախ պետությունների համագործակցության միջպետական հիդրոդերևութաբանական ցանցի մասին» համաձայնագրերի դրույթների հիման վրա:

2. Ծրագրով կանոնակարգվում են հիդրոմետ ծառայության կողմից 2018-2020 թվականների ընթացքում կատարման ենթակա պետական նշանակության հիդրոդերևութաբանական աշխատանքները՝ ուղղված հիդրոդերևութաբանական երևույթների և պրոցեսների դիտարկումների պետական ցանցում իրականացվող մոնիթորինգի արդյունքում ստացվող տեղեկատվությամբ հասարակության, պետական կառավարման մարմին-

ների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց պահանջմունքների բավարարմանը՝ գիտակցելով այդ տեղեկատվության կարևորությունը՝

1) վտանգավոր հիդրոոգերնութաբանական պայմաններից, այլ բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակներից տնտեսության և բնակչության պաշտպանության.

2) տնտեսական և բնապահպանական բնույթի որոշումների ընդունման.

3) պետության հիդրոոգերնութաբանական անվտանգության ապահովման.

4) եղանակակլիմայական պայմանների, այլ հիդրոոգերնութաբանական և հելիոերկրաֆիզիկական երևույթների համընդգրկուն փոփոխությունների ուսումնասիրման.

5) միջազգային հիդրոոգերնութաբանական ցանցի հետ հիդրոմետ ծառայության գործունեության միասնականացման և այլ հարցերում:

3. Ծրագիրը կազմվել է դիտարկումների ցանցի օբյեկտների գործունեությունը կանոնակարգող նորմատիվ իրավական ակտերի հիման վրա՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի N 818-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության 2018-2020 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով այդ աշխատանքների համար նախատեսված ֆինանսավորման կողմնորոշիչ չափաքանակներն ու ծավալները:

4. Ծրագրում օգտագործված հիմնական հասկացություններն ունեն նույն իմաստը, որոնք ներկայացված են «Հիդրոոգերնութաբանական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում:

## II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

5. Հիդրոմետ ծառայությունն ապահովում է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններին, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, բնակչությանը, տնտեսության տարբեր ճյուղերին հիդրոոգերնութա-

թաքանական փաստացի պայմանների և դրանց սպասվող փոփոխությունների, կլիմայի ներկա և ապագա վիճակի մասին տեղեկատվությամբ՝

1) անբարենպաստ հիդրոոլերևութաբանական պայմաններից բնակչությանը և տնտեսությունը պաշտպանելու նպատակով.

2) մարդկանց կյանքին և սեփականությանն սպառնացող վտանգի և հնարավոր վնասի նվազեցման նպատակով.

3) շրջակա միջավայրի վրա մարդու բացասական ազդեցության կանխարգելման միջոցառումների իրականացման նպատակով:

### III. ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ

6. Հանրապետության տարածքում մթնոլորտում և գետնի մակերևույթին տեղի ունեցող ֆիզիկական երևույթների ուսումնասիրման նպատակով 46 օդերևութաբանական (այդ թվում՝ 6 դժվարամատչելի և 3 մասնագիտացված) կայաններում լրիվ ծրագրով, իսկ 25 հիդրոլոգիական դիտակետերում կրճատ ծրագրով (միայն օդի ջերմաստիճանի, տեղումների, մթնոլորտային երևույթների և ձյան բարձրության), Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության կողմից սահմանված կարգով և միջազգային ստանդարտներին համապատասխան Գրինվիչի ժամանակով ժամը 00–ին, 03–ին, 06–ին, 09–ին, 12–ին, 15–ին, 18–ին և 21–ին, իսկ մթնոլորտային երևույթների և եղանակի վիճակի նկատմամբ՝ շուրջօրյա դիտարկումների իրականացում հետևյալ օդերևութաբանական տարրերի նկատմամբ.

Աշխատանքների (տարրերի) անվանումները	Ամրագրման հաճախականությունը և (կամ) ժամկետը	Կայանների քանակը
1) Օդի ջերմաստիճան՝ ա. նվազագույն բ. առավելագույն գ. ժամկետային	շուրջօրյա, յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ	46 կայաններում
2) Հողի մակերևույթի ջերմաստիճան՝ ա. նվազագույն	շուրջօրյա, յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ	43 կայաններում (բացի Երևանի ատերոլոգիական,

բ. առավելագույն		Երևանի Արաբկիր և Ապարանի ջրամբարի կայաններից)
գ. ժամկետային		
3) Հողի ջերմաստիճանը 5, 10, 15, 20 սմ խորությունների վրա	շուրջօրյա, յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ	21 կայաններում
4) Հողի 20, 40, 80 (կամ 60), 120 (կամ 100) սմ խորությունների ջերմաստիճանը	տարվա տաք ժամանակաշրջանում՝ յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ, ցուրտ ժամանակաշրջանում՝ օրական 1 անգամ	3 կայաններում՝ Երևան Ագրո, Մարտունի, Վանաձոր
5) Քամի՝	շուրջօրյա, յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ	46 կայաններում
ա. ուղղությունը դիտաժամին		
բ. միջին արագությունը դիտաժամին		
գ. առավելագույն արագությունը դիտաժամին		
դ. առավելագույն պոռթկումը դիտաժամների միջև		
6) Տեսանելիություն՝	շուրջօրյա, յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ	46 կայաններում
7) Անպամաճություն՝	շուրջօրյա, յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ	46 կայաններում
ա. անպամաճության քանակը		
բ. ամպերի ձևերը (տեսակները)		
գ. ամպերի բարձրությունը		
8) Եղանակի բնութագիրը	շուրջօրյա, յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ	46 կայաններում
ա. դիտաժամին		
բ. դիտաժամների միջև		
9) Դիտված մթնոլորտային երևույթները	շուրջօրյա, յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ	46 կայաններում
ա. երևույթի սկիզբը		
բ. ավարտը		
գ. ինտենսիվությունը		
10) Օդի խոնավությունը՝	շուրջօրյա, յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ	46 կայաններում
ա. հարաբերական խոնավություն		
բ. հազեցման պակասորդը		
գ. ջրային գոլորշու առաձգականությունը		
դ. ցողի կետը		
11) Մթնոլորտային ճնշումը՝	շուրջօրյա, յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ	46 կայաններում
ա. կայանի բարձրության վրա		
բ. ծովի մակարդակի կամ համապատասխան իզոբարական մակերևույթի վրա		
գ. բարոմետրական տենդենցի բնույթը և չափը		
12) Տեղումների քանակը	օրական 2 անգամ	46 կայաններում
13) Գոլորշացումը	օրական 4 անգամ	7 կայաններում
14) Ձնածածկույթի՝		

ա. բարձրությունը	օրական 1 անգամ	46 կայաններում
բ. շրջապատի ձնածածկվածության աստիճանը		
գ. խտությունը	տասնօրյակը մեկ	38 կայաններում
դ. ջրի պաշարը		
15) Վտանգավոր մթնոլորտային երևույթների բնութագիրը	շուրջօրյա	46 կայաններում
ա. սկիզբը		
բ. ավարտը		
գ. ինտենսիվությունը		
16) Սառցակալումը (մերկասառույց, ջինջառ)	երևույթի առկայության դեպքում ոչ պակաս, քան 1,5 ժամը մեկ անգամ	3 կայաններում՝ Գյումրի, Անանուն լեռնանցքի, Պուշկինի լեռնանցքի
ա. սկիզբը		
բ. ավարտը		
գ. ինտենսիվությունը		
17) Արևափայլի տևողությունը	ըստ տևողության՝ 1-3 անգամ	27 կայաններում
18) Հողի մակերևույթի վիճակը	օրական 1 անգամ	46 կայաններում

#### IV. ԱԵՐՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

7. Երևանի աերոլոգիական կայանում օրական մեկ անգամ մթնոլորտի ռադիո-գոնդարկման իրականացում Գրինվիչի ժամանակով 00 ժամին՝ մինչև 30 կմ բարձրության մթնոլորտի տարբեր շերտերի հիմնական օդերևութաբանական պարամետրերի՝ ջերմաստիճանի, խոնավության, ճնշման, քամու ուղղության և արագության ուսումնասիրման նպատակով:

#### V. ՀԵԼԻՈԵՐԿՐԱՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

8. Ակտիվությունների շուրջօրյա դիտարկումների իրականացում 7 կայաններում (Երևան, Տաշիր, Գյումրի, Համբերդ, Մարտունի, Սևան, Որոտանի լեռնանցք)՝ օրվա ցերեկային ժամերին՝ 3 ժամը մեկ անգամ (Գրինվիչի ժամանակով ժամը 06.30, 09.30, 12.30, 15.30, 18.30), գիշերային ժամերին՝ մեկ անգամ (Գրինվիչի ժամանակով ժամը 21.30-ին), արեգակի և երկրի ճառագայթման հաշվեկշռի բաղադրիչների վերաբերյալ՝ ուղիղ ճառագայթման, ցրված ճառագայթման, անդրադարձված ճառագայթման, գումարային ճառագայթման հաշվեկշռի, մակերևույթի ալբեդոյի ուսումնասիրման նպատակով:

Երևանում (Արաբկիր կայանում) Մ-124 օգնաչափով, Գրինվիչի ժամանակով ժամը 07.00–ից մինչև ժամը 10.00-ը՝ պարզ երկնքի դեպքում օգնի ընդհանուր պարունակության չափումներ՝ յուրաքանչյուր ժամը մեկ անգամ, Համբերդ կայանում՝ Դոբսոնի սպեկտրաֆոտոմետրով, օրվա ցերեկային ժամերին պարզ երկնքի դեպքում՝ 3-5 անգամ:

## VI. ԱԳՐՈՂԵՐՆՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

10. Ագրոդերևութաբանական դիտարկումների իրականացում Երևանի մասնագիտացված ագրոդերևութաբանական կայանում, օդերևութաբանական ցանցի 40 կայաններում՝ 31 գյուղատնտեսական մշակաբույսերի վրա, խոտհարքներում և արոտավայրերում.

Աշխատանքների (տարրերի) անվանումները	Ամրագրման հաճախականությունը և (կամ) ժամկետը
<b>1. ՎԵԳԵՏԱՑԻՈՆ ՇՐՋԱՆՈՒՄ</b>	
1.1 Բույսերի զարգացման փուլերի որոշում	2 օրը մեկ անգամ (41 կայան)
1.2 Բույսերի բարձրության որոշում	10 օրը մեկ անգամ (19 կայան)
1.3. Բույսերի խտության որոշում (1 քառ. մ վրա)	3-5 անգամ (25 կայան)
1.4 Բույսերի վիճակի և դաշտի մոլախոտային աղտոտվածության որոշում	10 օրը մեկ անգամ (41 կայան)
1. 5. Բերքատվության տարրերի որոշում	տարին 3 անգամ (22 կայան)
1. 6. Բերքի կառուցվածքի որոշում	տարին 1 անգամ (22 կայան)
1. 7. Հողի վերին շերտերի (0-5 սմ) վիճակի որոշում՝ աչքաչափային մեթոդով	հարակից չողոզվող տարածքներում, ամեն օր (15 կայան)
1. 8. Հողի խոնավության գործիքային որոշում	ամիսը 3 անգամ (2 կայան)
1. 9. Հողի խոնավության որոշում 9 կայաններում՝ մինչև 1 մ խորության 5 մակարդակների վրա	ըստ ստանդարտներով սահմանված ժամկետների (10 կայան)
1. 10. Ջերմասեր մշակաբույսերի հողի վարելաշերտի ջերմաստիճանի որոշում	1 ամսվա ընթացքում, 2 օրը մեկ անգամ (20 կայան)
1. 11. Հողի կեղևակալվածության որոշում	1 ամսվա ընթացքում, 2 օրը մեկ անգամ (20 կայան)
1. 12. Մշակաբույսերի վնասվածության որոշում՝ պայմանավորված օդերևութաբանական անբարենպաստ պայմանների ազդեցությամբ	երևույթի առկայության դեպքում
1.13. Արոտավայրերում խոտածածկի և հողի վերին շերտի պայմանների որոշում	արածեցման սեզոնում, 10 օրը մեկ անգամ (7 կայան)
1. 14. Պտղատուների վիճակի հետազոտություն	1 անգամ զարնանը՝ ծաղկման

	Ժամանակաշրջանում (30 կայան)
2. ՈՉ ՎԵԳԵՏԱՑԻՈՆ ՇՐՋԱՆՈՒՄ	
2. 1. Աշնանացան ցորենի և ցանովի խոտաբույսերի կենսոնակության որոշում	2 անգամ՝ հունվարին և փետրվարին (20 կայան)
2. 2. Պտղատուների ճյուղերի կենսոնակության որոշում	-18°C ցածր ջերմաստիճանների դեպքում՝ անմիջապես, մարտ ամսին՝ պարտադիր կարգով (30 կայան)
2. 3. Աշնանացան ցորենի թփակալման հանգույցի ջերմաստիճանի որոշում	ձմռան ընթացքում (1 կայան)
2. 4. Հողի սառածության և (կամ) հալվածության խորության որոշում	ձմռան ընթացքում, (4 կայան)

## VII. ՀԻԴՐՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

11. Հիդրոլոգիական ռեժիմային ուսումնասիրությունների իրականացում յոթ գետավազանային (Դեբեդ, Աղստև, Ախուրյան, Քասախ-Սևջուր, Սևան-Հրազդան, Արփա, Որոտան) հիդրոլոգիական կայանների 85 գետային, 5 ջրամբարային (Արփի լճի, Ախուրյանի, Ապարանի, Մարմարիկի և Ազատի) և 4 լճային (Սևանա լճի) դիտակետերում, ինչպես նաև Արաքս-Սուրմալու, Ախուրյան-Հայկաձոր և Ախուրյան-Բազարան հիդրոլոգիական դիտակետերում Թուրքիայի Հանրապետության մասնագետների հետ համատեղ ջրաչափական աշխատանքների կատարում:

Աշխատանքների (տարրերի) անվանումները	Ամրագրման հաճախականությունը և (կամ) ժամկետները
1) գետերում	
ա. ջրի ելքը (ծախսը)	վարարման շրջանում ամսական 3-4 անգամ, մյուս ամիսներին՝ 1-2 անգամ
բ. ջրի մակարդակը	յուրաքանչյուր 12 ժամը մեկ անգամ
գ. ջրի ջերմաստիճանը	յուրաքանչյուր 12 ժամը մեկ անգամ
դ. սառցային երևույթները	յուրաքանչյուր 12 ժամը մեկ անգամ (երևույթի առկայության դեպքում)
2) Սևանա լճի ջրի ջերմաստիճանը տարբեր խորություններում, ալիքի բարձրությունը, ջրի թափանցելիության սահմանը	առնվազն ամսական 1 անգամ
3) գոլորշացման դիտարկումներ 7 օդերևութաբանական կայաններում (Վանաձոր, Օձուն, Ապարան, Վարդենյաց, Մարտունի, Երևան ագրո, Արարատ)	շուրջօրյա՝ 4 ժամը մեկ անգամ

4) Սևանա լճի 4 դիտակետերում (Սևան, Շորժա, Կարճաղբյուր, Մարտունի) լճի մակարդակի և ջերմաստիճանի դիտարկումներ	յուրաքանչյուր 12 ժամը մեկ անգամ
5) Արփի լճի, Ախուրյանի, Ապարանի, Ազատի, Մարմարիկի ջրամբարներում	յուրաքանչյուր 12 ժամը մեկ անգամ
ա. ջրի ջերմաստիճանը	յուրաքանչյուր 12 ժամը մեկ անգամ
բ. ջրի ծավալը	յուրաքանչյուր 12 ժամը մեկ անգամ
գ. ջրի մակարդակը	վարարման շրջանում ամսական 3-4 անգամ, մյուս ամիսներին՝ 1-2 անգամ
դ. սառցային երևույթները	երևույթի առկայության դեպքում

### VIII. ՌԱԴԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

12. Հիդրոոդերևութաբանական ցանցի 34 (այդ թվում՝ 14 հենակետային) կայաններում ռադիոլոգիական իրավիճակի վերաբերյալ ամեն օր, Գրինվիչի ժամանակով ժամը 06.00-ին և 18.00-ին իրականացնել գամմա ֆոնի չափումներ: Երևանյան լաբորատորիայում իրականացնել մթնոլորտից երկրի մակերևույթի վրա տեղացող ռադիոակտիվ փոշու խտության ամենօրյա չափումներ:

13. Իրականացնել օդերևութաբանական կայաններից բերված հողի նմուշների գումարային բետտա-ակտիվության չափումներ:

14. Իրականացնել ատոմակայանի շրջակայքից (Սևջրից) բերված ջրի նմուշներում կոշտ մնացորդների գումարային բետտա-ակտիվության չափումներ:

### IX. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

15. 2018-2020 թվականների ընթացքում գիտահետազոտական աշխատանքներն իրականացնել հետևյալ հիմնական ուղղություններով՝

1) վերլուծել և ամփոփել նախորդ տարվա դիտարկումների հավաքագրված տվյալները, կազմել Հայաստանի Հանրապետության տարածքի տարվա կլիմայական նկարագիրը, հաշվետվություն ներկայացնել ՀՕԿ-ի VI տարածաշրջանային ասոցիացիայի

տարածաշրջանային կենտրոնին և Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանը.

2) իրականացնել Հայաստանի տարածքի կլիմայական (ամսական, սեզոնային և տարեկան) հիմնական տարրերի (միջին, առավելագույն, նվազագույն ջերմաստիճանների և տեղումների քանակի և նորմայից դրանց շեղումների վերլուծություն՝ քարտեզագրելով ստացված արդյունքները.

3) ապահովել մոնիթորինգի արդյունքների անգլերեն տարբերակի տրամադրումը Գերմանիայի եղանակի ծառայությանը՝ ՀՕԿ-ի Եվրոպայի տարածաշրջանի կլիմայական մոնիթորինգի համակարգի կայքում տեղադրելու համար.

4) վերանայել կլիմայական բոլոր հարաչափերի նորմերը, ըստ նախորդ տարվա դիտարկումների տվյալների՝ օգտագործելով Մետեոֆրանսի կողմից մշակված տեղումների և ջերմաստիճանի ամսական տվյալների վերականգնման ծրագիրը՝ սխալների հայտնաբերման, վերականգնման և համասեռության ապահովման նպատակով.

5) գնահատել կլիմայի փոփոխության միջկառավարական խմբի կողմից առաջարկված գլոբալ կլիմայական մոդելների տարածաշրջանային կլիման վերարտադրելու ունակությունը, ընտրելով լավագույն տարբերակը Հայաստանի տարածքում կլիմայի փոփոխության գնահատականների ճշգրտման համար.

6) ուսումնասիրել և գնահատել կլիմայի փոփոխության ազդեցությունը քաղաքային կլիմայի ջերմային ռեժիմի փոփոխության վրա.

7) բարելավել Հայաստանի տարածքում տաք և ցուրտ ալիքների հաշվարկային մեթոդիկան և գնահատել այդ ինդեքսների դինամիկան.

8) իրականացնել Հայաստանի տարածքի ագրոկլիմայական գոտիականացում՝ առանձնացնելով շրջանները, որոնք կլիմայական առումով հարմար են որոշակի մշակաբույսերի աճեցման համար՝ ըստ միջավայրի հիդրոոդերևութաբանական պայմանների՝

պարենի և գյուղատնտեսության կազմակերպության դասակարգման (5 դաս) մեթոլոլոգիայի կիրառմամբ.

9) ապահովել Հայաստանի Հանրապետության տարածքում և առանձին կլիմայական գոտիներում ջերմաստիճանի և տեղումների տարեկան սեզոնային կտրվածքով՝ փոփոխությունների սցենարներն ապագայում՝ ըստ գլոբալ և ռեգիոնալ մոդելների.

10) Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի հետ համատեղ իրականացնել եղանակի թվային կանխատեսման «Եղանակի հետազոտում և կանխատեսում» ամերիկյան և եղանակի թվային կանխատեսման փոքր լուծաչափով գերմանական մոդելների տեղայնացման աշխատանքներ՝ բարելավելու եղանակի կանխատեսումը.

11) բարելավել եղանակի թվային կանխատեսման մոդելի արդյունքները միկրոֆիզիկական և կոնվեկցիոն պրոցեսների «Եղանակի հետազոտում և կանխատեսում» համապատասխան ֆիզիկական պարամետրիզացիաների տարբեր Կաին Ֆրիտց, Գրեյ, Միլլեր-Յանիչ, Զանգ Մակֆարլան փաթեթների փորձարկմամբ բարձրացնելու ջերմաստիճանի, ճնշման դաշտի, տեղումների ինտենսիվության կանխատեսման ճշգրտությունը.

12) կիրառել եղանակի թվային կանխատեսման «Եղանակի հետազոտում և կանխատեսում» մոդելը վտանգավոր երևույթների հետազոտությունների և կանխատեսումների համար օգտագործելով տարբեր գլոբալ մոդելների արդյունքները՝ որպես սկզբնական և եզրային պայմաններ.

13) փորձարկել «Եռաչափ վարիացիների ասիմիլիացիայի» փաթեթը, որը հնարավորություն է ընձեռում իրականացնելու նաև արբանյակային տվյալների ինտեգրում մոդելին.

14) գործարկել «Կլիմայի կանխատեսման գործիք» ծրագրային փաթեթը, գնահատելու ԱՄՆ-ի Միջազգային գիտակիրառական ինստիտուտի կողմից մշակված մթնոլորտի գլոբալ շրջանառության ինդեքսների՝ Էլ Նինյո-հարավային տատանումներ, հյուսիս-ատլանտյան տատանումներ, հյուսիս-արկտիկական տատանումներ, արկտի-

կական տատանումներ, խաղաղ, Հյուսիս- ամերիկյան շրջանառություն և տեղական շրջանառության տվյալների վիճակագրական կապերը՝ արդյունքներն օգտագործելու կլիմայի երկարաժամկետ կանխատեսումների համար.

15) իրականացնել Հայաստանի Հանրապետության տարածքում երաշտային պայմանների տասնօրյակային, ամսական և սեզոնային մոնիթորինգ՝ օգտագործելով նաև բուսականության աճի գնահատման արբանյակային տեղեկատվությունը: Ուսումնասիրել և ներդնել տեղումների ստանդարտացված, բուսականության աճի գնահատման, բուսականության վիճակի միջին սահմանային, արբանյակային ինդեքսները՝ Հայաստանի տարածքում երաշտի գնահատման համար.

16) գնահատել Հայաստանի տարածաշրջանում կլիմայական էքստրեմումների ինդեքսները՝ ներառելով վերջին տարվա տվյալները, արդյունքները կիրառել տարբեր ոլորտներին սպասարկելու համար.

17) իրականացնել կլիմայական առանձին տարրերի բաշխման, դրանց ինտենսիվության, դիտման ժամկետների քարտեզագրում՝ օգտագործելով ժամանակակից քարտեզագրման տեխնոլոգիաները, մասնավորապես, կատարել Հայաստանի տարածքի ցրտահարության ժամկետների քարտեզագրում ըստ գոտիների.

18) առանձին էկոհամակարգերի (անտառ, գյուղատնտեսական հողահանդակներ, արոտավայրեր, ջրային ավազաններ) համար գնահատել միկրոկլիմայական պատկերը և դրանց բնութագրիչների փոփոխության միտումները՝ կիրառելով նաև բուսականության աճի գնահատման, բուսականության վիճակի միջին սահմանային և այլ արբանյակային ինդեքսների տվյալները՝ գնահատելով էկոհամակարգերի խոցելիությունը.

19) Հայաստանի տարածքի արեգակնային ճառագայթման բաշխման քարտեզների կազմման համար օգտագործել ակտիվումետրիական նորացված ցանցի և կլիմայական մոնիթորինգի արբանյակային ծրագրի տվյալները.

մշակման. կանխատեսումների արդարացվածության բարելավման, հիդրոլոգիական կանխատեսումների մոդելների ստեղծման նպատակով ներդնել վիճակագրական վերլուծության ծրագրային փաթեթը.

21) ներդնել Հայաստանի Հանրապետության տարածքում ձնածածկույթի տարածքների քարտեզների կազմման, գարնանային վարարումների ժամանակահատվածում հոսքի ծավալների կանխատեսումների արդարացվածության բարձրացման նպատակով ձնածածկույթի ամենօրյա մոնիթորինգի գործիք ծրագրային փաթեթը.

22) ներդնել հիդրոլոգիական կանխատեսումների արդարացվածության բարձրացման, տրամադրվող հիդրոլոգիական տեղեկատվության ընդլայնման նպատակով ջրային հաշվեկշռի և ձնածածկ-հոսք մոդելները.

23) հիմնել օպերատիվ հիդրոլոգիական տեղեկատվության սպասարկման կատարելագործման նպատակով հիդրոլոգիական կայանների և ծառայության միջև տեղեկատվության փոխանակման առցանց համակարգ.

24) լրամշակել և կատարելագործել Սևանա լճի մակարդակի փոփոխության և խոշոր ջրամբարների առավելագույն լցվածության կանխատեսումների մեթոդները.

25) շարունակել «Մերձավոր Արևելքի և Սևծովյան տարածաշրջանի երկրներում հանկարծահաս հեղեղումների կառավարում» ծրագրի միջոցով ստացվող հիդրոոդերևութաբանական արդյունքների կիրառումը, գետերում հանկարծահաս հեղեղումների կանխատեսման և անբարենպաստ ու վտանգավոր իրավիճակների վերաբերյալ նախագգուշացումների կազմման համար, ինչպես նաև արդյունքների և փաստացի արժեքների համեմատությունը և վերլուծությունը.

26) շարունակել «Հայկական ԽՍՀ բնական պայմաններ և ռեսուրսներ (Հիդրոլոգիա)» ատլասի քարտեզների թվայնացման, խմբագրման աշխատանքները և տպագրել.

27) հիդրոլոգիական կայաններում ամենամյա Հիդրոլոգիական տարեգրի կազմման աշխատանքներն ամբողջությամբ իրականացնել Ռուսիիդրոմետի կողմից մշակված հիդրոլոգիական դիտարկումների արդյունքներն ամփոփող և ելքային պատրաստի ինֆորմացիա տրամադրող համակարգչային ծրագրի միջոցով.

28) ԱՏՀ համակարգի կիրառմամբ հաշվարկել Հայաստանի Հանրապետության տարածքի 5 կմ և ավելի երկարություն ունեցող գետերի ավազանների հիդրոգրաֆիական բնութագրիչները և ստացված արդյունքների հիման վրա ծրագրային հավելվածի հիման վրա ստեղծել տվյալների բազա.

29) կազմել և տպագրել «Հայաստանի Հանրապետության մակերևութային ջրային ռեսուրսների ամենամյա տվյալներ» հիդրոլոգիական ամենամյա տարեգիրը.

30) կազմել և տպագրել Ջրային մակերևութներից գոլորշացման դիտարկված նյութերի ամենամյա ամփոփագիրը.

31) լրամշակել և տպագրել «ԽՍՀՄ մակերևութային ջրային ռեսուրսներ. 9-րդ հատորի 1 թողարկում» աշխատությունը.

32) շարունակել «Հայաստանի Հանրապետության մակերևութային ջրային ռեսուրսների ամենամյա տվյալներ» հիդրոլոգիական ամենամյա տարեգրերի թվայնացման աշխատանքները «MS Excel» ծրագրային հավելվածով.

33) լրամշակել և թվայնացնել «Հայական ԽՍՀ բնական պայմաններ և ռեսուրսներ (կլիմա)» ատլասի քարտեզները՝ օգտագործելով ժամանակակից թվային տեխնոլոգիաները.

34) բազմաշերտ հիդրոդերևութաբանական քարտեզների, աղյուսակների, գրաֆիկների կազմում, առանձին քարտեզների ներկայացում ինտերնետում.

35) շարունակաբար ուսումնասիրել հիդրոդերևութաբանական տվյալներով պետական կառավարման մարմիններին և այլ շահառուներին տրամադրվող տեղեկատվու-

թյան որակը՝ բարելավելով այն՝ օգտագործելով քարտեզներ, գրաֆիկներ, մետեոգրամներ, առավել հասցեական և պարզ տեղեկատվություն.

36) մշակել տարբեր բիզնես ծրագրերում կլիմայական տեղակայության անհրաժեշտության, սպասարկման, մասնագիտական խորհրդատվության ձևեր և մեթոդներ.

37) տուրիզմի զարգացման և սպասարկման համար մշակել միջազգային չափորոշիչներին համապատասխան ուղեցույցներ, բուկլետներ:

## X. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

16. Կանխատեսումների, տեղեկագրերի, տարեգրերի պատրաստում, ծառայությունների մատուցում և համաշխարհային ու տարածաշրջանային կենտրոններին տեղեկատվության հաղորդում համաձայն ՀՕԿ-ի կոնվենցիայով, ԱՊՀ միջպետական համաձայնագրերով, սույն ծրագրով ամրագրված, ինչպես նաև երկկողմ պայմանագրերով ստանձնած պարտավորությունների: Այդ թվում՝

Տեղեկատվության անվանումը	Տեղեկատվության տրամադրման հաճախականությունը և (կամ) կատարման ժամկետը
1) Եղանակի փաստացի քարտեզ	ամենօրյա
2) Հիդրոոլորոնութաբանական տեղեկագիր	ամենօրյա
3) Ամսական եղանակային պայմանների կանխատեսում	յուրաքանչյուր ամիս
4) Սեզոնային եղանակային պայմանների կանխատեսում	հոկտեմբեր, մարտ
5) Տեսություններ դիտված եղանակային պայմանների մասին	յուրաքանչյուր ամիս
6) Տեսություններ դիտված և սպասվող երևույթների մասին	յուրաքանչյուր շաբաթ
7) Երևան քաղաքում և մարզկենտրոններում դիտված միջին օրական ջերմաստիճանների տրամադրում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը	մայիս-հոկտեմբեր
8) Լիազոր մարմնի ճգնաժամային կառավարման կենտրոնին և ինտերնետ կայքին եղանակի կանխատեսումների և վտանգավոր երևույթների մասին նախազգուշացումների տրամադրում	ըստ կանխատեսման
9) Հանրապետության 10 մարզերի համար հիդրոոլորոնութաբանական տեղեկագրերի պատրաստում	ամենօրյա
10) Հիդրոոլորոնութաբանական սպասվելիք կամ դիտված վտանգավոր երևույթների մասին տեղեկատվության պատրաստում	ամենօրյա

11) Հանրային լրատվամիջոցների համար կանխատեսումներ և տեսություններ	ամենօրյա
12) Աերոսինոպտիկական նյութեր և կանխատեսումներ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ավիացիայի վարչության համար	ամենօրյա
13) Ուլտրամանուշակագույն ճառագայթման ինտենսիվության և գեոմագնիսական դաշտի վիճակի փոփոխությունների գնահատում և կանխատեսում	ամենօրյա
14) Հայաստանի Հանրապետության տարածքում տեղաբաշխված Ռուսաստանի Դաշնության զինված ուժերին հիդրոդերևութաբանական տեղեկատվությամբ և կանխատեսումներով ապահովում	ամենօրյա
15) Շահագրգիռ կազմակերպություններին և բնակչությանը ահազանգում՝ հիդրոդերևութաբանական վտանգավոր երևույթների մասին	ըստ երևույթների առկայության
16) Երևանի քաղաքապետարանին հիդրոդերևութաբանական վտանգավոր երևույթների մասին տեղեկատվությամբ և կանխատեսումներով ապահովում	ամենօրյա
17) Ինտերնետային կայքի ամենօրյա թարմացում դիտված եղանակի վերլուծական նյութերով և կանխատեսումներով, ըստ կանխատեսման՝ եղանակի վտանգավոր երևույթների վերաբերյալ նախազգուշացումների տեղադրում:	ամեն օր և ըստ դիտման փաստի
18) Դիտված եղանակի սեզոնային վերլուծությունների տրամադրում Ռուսաստանի Դաշնության հիդրոմետ ծառայության համապատասխան ստորաբաժանումներին և հարավ-արևելյան ու միջերկրածովյան երկրների կլիմայական վերլուծությունների կոնսուրցիումին	մայիս, հոկտեմբեր
19) Եղանակի թվային կանխատեսման փոքր լուծաչափով մոդելի ներդրում	2019 թ.
20) Օդերևութաբանական դիտարկումների տվյալների նոր թվային երկակի միջազգային ծածկագրի լիակատար ներդրում	2019 թ.
21) Աերոլոգիական դիագրամաների վերլուծություն	ամեն օր
22) Փաստացի և կանխատեսվող տվյալների վիզուալիզացիա քարտեզի տեսքով	2019 թ.
23) Վեգետացիայի ընթացքի վերլուծություններ արբանյակային տվյալների միջոցով	վեգետացիայի սեզոնին յուրաքանչյուր տասնօրյակ
24) Ցորենի, խաղողի, կարտոֆիլի ջրապահովվածության գնահատում զարգացման տարբեր փուլերում	վեգետացիայի սեզոնին յուրաքանչյուր տասնօրյակ
25) Ագրոկլիմայական շրջանների քարտեզագրում	2019 թ.
26) Հանրային հեռուստատեսության համար 1 օրվա հիդրոդերևութաբանական կանխատեսման տրամադրում	ամենօրյա
27) Հանրապետության 10 մարզերի համար հիդրոդերևութաբանական տեղեկագրերի պատրաստում	ամենօրյա
28) Գարնանային վարարումների տարրերի կանխատեսում	մարտ ամիս

29) Գարնանային վարարումների տարրերի կանխատեսման ճշգրտում	հունիս ամսին (ըստ անհարժեշտության )
30) Գետերի ամսական ելքերի կանխատեսում	ամսական
31) Գետերի միջին վեգետացիոն ելքերի կանխատեսում	տարեկան 1 անգամ
32) Գետերի միջին եռամսյակային ելքերի կանխատեսում	յուրաքանչյուր եռամսյակ
33) Գետերի տասնօրյակային ելքերի կանխատեսում	յուրաքանչյուր տասնօրյակ
34) Գետերի միջին օրական ելքերի կանխատեսում	ամեն օր
35) Ձնածածկույթի վերաբերյալ տեղեկանք	մարտ ամսին
36) Սևանա լճի ջրային հաշվեկշիռը	ամսական և տարեկան
37) Սևանա լճի մակարդակը	ամենօրյա
38) գետերի մակարդակի և ելքի տվյալներ	ամենօրյա
39) Հրազդան-Հրազդան դիտակետում ջրի մակարդակի դիտարկման և ելքի չափման հաճախականացված աշխատանքներ	պարբերաբար, ապրիլ-հունիս ամիսներին
40) Հրազդան-Հրազդան, Հրազդան-Լուսակերտ դիտակետերում ջրի ելքի հաճախականացված չափումներ	պարբերաբար, հունիս-սեպտեմբեր ամիսներին
41) Սևանա լճից բաց թողնված ջրի քանակի վերաբերյալ տվյալներ	ամենօրյա, ըստ բացթողումների գրաֆիկի
42) Սևանա լճի մակարդակի (վարարումների ընթացքում, դեկտեմբերի 31-ի դրությամբ) կանխատեսում	ապրիլ, հունիս, սեպտեմբեր
43) Դիտված հեղեղումների տվյալների մշակում և աշխարհագրական տեղեկատվական համակարգով (ԱՏՀ) քարտեզագրում	մայիս-հոկտեմբեր ամիսներին
44) Գետերի հունային դեֆորմացիաների ուսումնասիրություններ	առաջին կիսամյակ
45) Տվյալների հաղորդում և փոխանակում	մշտապես, շարունակական
46) Տեղեկանքներ լեռնային և նախալեռնային տարածաշրջաններում աշնանացան ցորենի ցանքի պայմանների մասին	1-2 անգամ, աշնանը
47) Տեղեկանքներ աշնանացան ցորենի ձմեռման պայմանների մասին	2 անգամ, փետրվար-մարտ ամիսներին
48) Աշնանացան ցորենի ձմեռման ընթացքում վնասվածության որոշում՝ ըստ կենսունակության տվյալների	2 անգամ, փետրվար-մարտ ամիսներին
49) Աշնանացան ցորենի վիճակի կանխատեսում վեգետացիայի սկզբին	1 անգամ, գարնանը
50) Աշնանացան ցորենի վեգետացիայի սկզբին լեռնային շրջաններում խոնավության պաշարների կանխատեսում	1 անգամ, գարնանը
51) Աշնանացան ցորենի մոմային հասունացման ժամկետների մասին տեղեկանք	1 անգամ, գարուն-ամառ ժամանակահատվածում
52) Աշնանացան ցորենի հասկակալման ժամկետների կանխատեսում առանձին տարածաշրջաններում	1 անգամ գարուն-ամառ ժամանակահատվածում
53) Աշնանացան ցորենի միջին հանրապետական բերքատվության կանխատեսում հասկակալման ժամանակ	1 անգամ, ամռանը
54) Հացահատիկային մշակաբույսերի միջին բերքատվության կանխատեսում	մայիս
ա. վեգետացիայի վերսկսման ժամանակ	1 անգամ, գարնանը
բ. ցողունակալման ժամանակ	1 անգամ, գարնանը

գ. հասկակալման ժամանակ	1 անգամ, գարուն-ամառ ժամանակահատվածում
55) Տեղեկանք հովտային շրջաններում վաղահաս կարտոֆիլի ցանքի ժամկետների վերաբերյալ	1 անգամ, փետրվար-մարտ ամիսներին
56) Կարտոֆիլի միջին հանրապետական բերքատվության կանխատեսում	1 անգամ, գարնանը
57) Տեղեկանք ջերմասեր կուլտուրաների ցանքի ժամկետների մասին՝ Արարատյան հովտում և նախալեռնային շրջաններում	1 անգամ, գարնանը
58) Բանջարանոցային մշակաբույսերի հանրապետական բերքատվության կանխատեսում	1 անգամ, գարուն-ամառ ժամանակահատվածում
59) Ծիրանի և դեղձի ծաղկման ժամկետների կանխատեսում	1 անգամ, գարնանը
60) Ծիրանի միջին բերքատվության կանխատեսում	1 անգամ, գարնանը
61) Արարատյան հովտում խաղողի ծաղկման ժամկետների կանխատեսում	1 անգամ, գարնանը
62) Լեռնային խոտհարքներում խոտի համախառն բերքատվության կանխատեսում	1 անգամ, գարուն-ամառ ժամանակահատվածում
63) Գարնանացան գարու բերքատվության կանխատեսում հանրապետությունում՝ ըստ զարգացման փուլերի	2-3 անգամ, գարուն-ամառ ժամանակահատվածում
64) Հողի խոնավության պաշարների կանխատեսում վեգետացիայի սկսվելուց առաջ՝ ըստ գոտիների, 0-10 սմ, 0-20 սմ, 0-50 սմ հողաշերտերում	1 անգամ, գարնանը
65) Տասնօրյակային ագրոտեղեկագրերի կազմում	յուրաքանչյուր տասնօրյակ
66) Բույսերի ձմեռային հանգստի շրջանի ագրոօդերևութաբանական տեղեկագրի կազմում	ամսական, ձմռան ընթացքում
67) Հարավային նախալեռնային գոտում աշնանացան ցորենի բերքահավաքի ժամանակ սպասվող ագրոկլիմայական պայմանների մասին տեղեկանք	1 անգամ, ամռանը
68) Աշնանացան ցորենի, կարտոֆիլի և խաղողի բերքատվության կանխատեսում արբանյակային տեղեկատվության կիրառմամբ	հուլիս
69) ՀՕԿ-ի VI տարածաշրջանային ասոցիացիայի կենտրոնին և ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանը կլիմայական վերլուծության տրամադրում	փետրվար ամսին
70) Ամսական, սեզոնային և տարեկան բնութագրերի վերլուծություն (միջին ջերմաստիճան, տեղումների քանակ և դրանց շեղումը նորմայից)	մշտապես, շարունակական
71) Տեղումների և ջերմաստիճանի նորմերի վերահաշվարկ՝ ընդգրկելով նախորդ տարվա դիտարկումների տվյալները	մշտապես, շարունակական
72) Կլիմայի փոփոխության միջկառավարական խմբի կողմից առաջարկված գլոբալ կլիմայական մոդելի կիրառություն, կլիմայի փոփոխության գնահատականների ճշգրտում	շարունակական
73) Կլիմայի փոփոխության ազդեցությունը քաղաքային կլիմայի ջերմային ռեժիմի փոփոխության վրա	մշտապես, շարունակական
74) ՀՀ տարածքում տաք և ցուրտ ալիքների գնահատում	մշտապես, շարունակական
75) Հայաստանի տարածքի ագրոկլիմայական գոտիականացում՝ առանձնացնելով շրջանները, որոնք կլիմայական առումով հարմար են որոշակի մշակաբույսերի աճեցման	2018-2019 թթ.

համար, ըստ միջավայրի հիդրոօդերևութաբանական պայմանների	
76) ՀՀ տարածքում և առանձին կլիմայական գոտիներում, ջերմաստիճանի և տեղումների տարեկան սեզոնային կտրվածքով, փոփոխությունների սպասվող սցենարները՝ ըստ գլոբալ և տարածաշրջանային մոդելների	մշտապես, շարունակական
77) «Եղանակի հետազոտում և կանխատեսում» ամերիկյան և եղանակի թվային կանխատեսման փոքր լուծաչափով գերմանական մոդելների տեղայնացում՝ եղանակի կանխատեսումը բարելավելու նպատակով	մշտապես, շարունակական
78) Բարելավել «Եղանակի հետազոտում և կանխատեսում» մոդելի արդյունքները միկրոֆիզիկական և կոնվեկցիոն պրոցեսների համապատասխան պարամետրիզացիաների Կաին Ֆրիտչ, Գրել, Միլեր-Յանիչ, Զանգ Մակֆարլան փաթեթների փորձարկմամբ՝ բարձրացնելու ջերմաստիճանի, ճնշման դաշտի, տեղումների կանխատեսման ճշգրտությունը	2018-2020 թթ.
79) «Եղանակի հետազոտում և կանխատեսում» մոդելի կիրառություն, վտանգավոր երևույթների հետազոտությունների և կանխատեսումների հարցերում՝ օգտագործելով տարբեր գլոբալ մոդելների արդյունքները, որպես սկզբնական և եզրային պայմաններ	մշտապես, շարունակական
80) Փորձարկել Եռաչափ վարիացիաների ասիմիլիացիայի փաթեթը, որը հնարավորություն է ընձեռում իրականացնել նաև արբանյակային տվյալների ինտեգրում մոդելին	2018-2019 թթ.
81) «Կլիմայի կանխատեսման գործիք» ծրագրային փաթեթի կիրառություն գնահատելու գլոբալ շրջանառության պրոցեսների և տեղական շրջանառության վիճակագրական կապերը	2018-2019 թթ.
82) Տեղումների ստանդարտացված, բուսականության աճի գնահատման, բուսականության վիճակի միջին սահմանային, արբանյակային ինդեքսների ներդրում Հայաստանի տարածքում երաշտի գնահատման համար	2018-2019 թթ.
83) ՀՀ տարածքում երաշտային պայմանների տասնօրյակային, ամսական և սեզոնային մոնիթորինգի իրականացում՝ օգտագործելով նաև բուսականության աճի մոնիթորինգի արբանյակային տեղեկատվությունը	մշտապես, շարունակական
84) Հայաստանի տարածաշրջանում կլիմայական էքստրեմումների ինդեքսների գնահատում, տնտեսության համապատասխան ոլորտների սպասարկում	մշտապես, շարունակական
85) Հայաստանի տարածքի ցրտահարության ժամկետների քարտեզագրում՝ ըստ գոտիների	2018 թ. նոյեմբեր
86) Առանձին էկոհամակարգերի (անտառ, գյուղատնտեսական հողահանդակներ, արոտավայրեր, ջրային ավազաններ) համար միկրոկլիմայական բնութագրիչների փոփոխության միտումների գնահատում՝ կիրառելով բուսականության աճի գնահատման, բուսականության վիճակի միջին սահմանային, արբանյակային ինդեքսները և այլ	2020 թ.

արբանյակային տվյալները	
87) Հայաստանի տարածքի արեգակնային ճառագայթման բաշխման քարտեզների կազմման համար օգտագործել ակտիվումետրիական նորացված ցանցի և կլիմայական մոնիթորինգի արբանյակային տվյալները	մշտապես, շարունակական
88) Բազմաշերտ հիդրոօդերևութաբանական քարտեզների, աղյուսակների, գրաֆիկների կազմում, առանձին քարտեզների ներկայացում ինտերնետում	2019 թ.
89) Տարբեր բիզնես ծրագրերում կլիմայական տեղակատվության անհրաժեշտության, սպասարկման, մասնագիտական խորհրդատվության ձևերի և մեթոդների մշակում	2018-2019 թթ.
90) Տնօրինի զարգացման և սպասարկման համար ուղեցույցների, բուկլետների մշակում՝ միջազգային չափորոշիչներին համապատասխան	2018-2019 թթ.
91) Կլիմայական ամսական տվյալների շարքերի սխալների հայտնաբերում, վերականգնում և համասեռության ապահովում	մշտապես, շարունակական
92) Ավտոմատ կայաններից հողի խոնավության ստացված տվյալների վերլուծություն և ճշտության գնահատում	2018-2019 թթ.
93) Տարեգրերի և տեղեկագրերի կազմում՝	մշտապես, շարունակական
ա. ագրոօդերևութաբանական	
բ. հիդրոլոգիական	
գ. ռադիոլոգիական	
94) Տվյալների բանկի ստեղծում	մշտապես, շարունակական
ա. օդերևութաբանական	
բ. հիդրոլոգիական	
գ. աերոլոգիական	
դ. ակտիվումետրիական	
ե. օգնումետրիական	
95) Տվյալների հաղորդում և փոխանակում	մշտապես, շարունակական
96) Գետնամերձ օդերևութաբանական դիտարկումների 17 կայանների տվյալների միջազգային ծածկագրով տրամադրում Մոսկվայի տարածաշրջանային կենտրոն՝ համաձայն ԱՊՀ միջպետական համաձայնագրի	ամենօրյա
97) Կլիմայի ունիվերսալ երկուական միջազգային ծածկագրերով գետնամերձ և աերոլոգիական տվյալների փոխանակության ապահովում համաշխարհային կենտրոնների համար	ամսական
98) Դիտված վտանգավոր երևույթների սեզոնային տեղեկագրի տրամադրում Տվյալների համաշխարհային կենտրոնին	ապրիլ, նոյեմբեր
99) Ռադիոգոնդարկման տվյալների հաղորդում ՀՕԿ-ի երեք տարածաշրջանային կենտրոններին	ամենօրյա
100) Օգնումետրիական տվյալների հաղորդում ՀՕԿ-ի Տն-րոնտոյի (Կանադա) տարածաշրջանային կենտրոնին	ամսական
101) Գամմա ֆոնի շաբաթական տվյալների հաղորդում Ռուսաստանի Դաշնության Օբնինսկ քաղաքի «Թայֆուն» գիտա-արտադրական միավորմանը	շաբաթական, ամսական

## XI. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

17. Հիդրոմետ ծառայության հետագա կայուն գործունեության ապահովման, նոր տեխնոլոգիաների ներդրման և մասնագիտական կադրերի պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման նպատակով իրականացնել՝

1) Համաշխարհային բանկի և դոնորների աջակցությամբ 2018 թվականից հիդրոօդերևութաբանական դիտարկումների պետական ցանցի փուլային ավտոմատացման և ծառայության արդիականացման ուղղությամբ միջոցառումներ.

2) մասնագետների վերապատրաստում և ատեստավորում՝ ըստ կարգի և ժամանակացույցի.

3) համագործակցություն Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ՝ ուսանողներին աջակցելու, նրանց ուսումնական պրակտիկան կազմակերպելու և, ըստ հնարավորության, մասնագիտական աշխատանքով ապահովելու ուղղությամբ.

4) ՀՕԿ-ի հիմնական սահմանադրական մարմինների և ԱՊՀ հիդրոօդերևութաբանության միջպետական խորհրդի (ՀՄԽ) հերթական նստաշրջաններին մասնակցություն, ինչպես նաև ընդունված որոշումների կատարում.

5) միջոցառումներ՝ նվիրված օդերևութաբանության, օգոնային շերտի պահպանության և ջրի համաշխարհային օրերին.

6) միջոցառումներ՝ նվիրված Հայաստանի պետական հիդրոօդերևութաբանական ծառայության հիմնադրման 90-ամյակին.

7) ՀՕԿ-ի և ԱՊՀ ՀՄԽ ծրագրերով մասնագետների վերապատրաստում և որակավորման բարձրացում.

ծառայությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների (այդ թվում՝ դոնոր) հետ համագործակցության ընդլայնում և ծրագրերի իրականացում,

**ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ  
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ**

NN ը/կ	Վայրը	Միջոցառման անվանումը (նպատակը)	Ժամկետը 2018 թ.	Ժամկետը 2019 թ.	Ժամկետը 2020 թ.
1.	ԱՊՀ, ըստ կայանալու վայրի	ԱՊՀ ՀՄԽ-ի աշխատանքային խմբերի նիստեր	2-րդ եռ.	2-րդ եռ.	2-րդ եռ.
2.	ԱՊՀ երկրներ	ԱՊՀ ՀՄԽ-ի 30-րդ, 31-րդ, 32-րդ նստաշրջաններ	3-րդ եռ.	3-րդ եռ.	3-րդ եռ.
3.	ՌԴ, ք. Մոսկվա	Հիդրոմետ ծառայության և Ռուսիիդրոմետի միջև երկկողմ համագործակցության վերաբերյալ քննարկումներ	ըստ պայմանա- վորվածու- թյան	ըստ պայմանա- վորվածու- թյան	ըստ պայմանա- վորվածու- թյան
4.	ՌԴ, ք. Մոսկվա	Մասնակցություն Ռուսիիդրոմետի կոլեգիայի ընդլայնված նիստերի աշխատանքներին	փետրվար	փետրվար	փետրվար
5.	ՌԴ, ք. Սանկտ Պետերբուրգ, ք. Օբնինսկ, ք. Ժելեզնո- դորոժնի	Հիդրոոգերևութաբանության բնագավառում մասնագետների վերաորակավորման և վերապատրաստման ուղղությամբ համագործակցության մասին ԱՊՀ միջպետական համաձայնագրի շրջանակներում մասնագետների վերապատրաստում Ռուսաստանի Դաշնությունում ՀՕԿ-ի ռեգիոնալ ուսուցողական կենտրոնում	ըստ ուսում- նական ծրագրերի և ֆինանսա- կան հնարավո- րության	ըստ ուսում- նական ծրագրերի և ֆինանսա- կան հնարավո- րության	ըստ ուսում- նական ծրագրերի և ֆինանսա- կան հնարավո- րության
6.	Շվեյցարիա, ք. Ժնև	Մասնակցություն ՀՕԿ-ի վեհաժողովի (կոնգրես) 18-րդ նստաշրջանի աշխատանքներին		մայիս-հունիս	
7.	Շվեյցարիա, ք. Ժնև	Մասնակցություն ՀՕԿ-ի 6-րդ տա- րածաշրջանային ասոցիացիայի 17-րդ նստաշրջանի աշխատանքներին	փետրվար		
8.	Շվեյցարիա, ք. Ժնև	Մասնակցություն ՀՕԿ-ի Կլիմայական սպասարկումների միջկառավարական խորհրդի նիստերի աշխատանքներին	տարվա ընթացքում	տարվա ընթացքում	տարվա ընթացքում
9.	Ըստ կայանալու վայրի	Մասնակցություն ՀՕԿ-ի հիմնական սահմանադրական մարմինների (գործադիր խորհրդի,	տարվա ընթացքում	տարվա ընթացքում	տարվա ընթացքում

		տարածաշրջանային ասոցիացիաների, տեխնիկական հանձնաժողովների) նստաշրջաններին			
10.	Ըստ կայանալու վայրի	Մասնագետների վերապատրաստում ՀՕԿ-ի տարածաշրջանային ուսուցողական կենտրոններում՝ ՀՕԿ-ի կրթության ծրագրի շրջանակներում	ըստ ֆինանսա- կան հնա- րավորու- թյունների	ըստ ֆինանսա- կան հնա- րավորու- թյունների	ըստ ֆինանսա- կան հնա- րավորու- թյունների
11.	«Բազմաբնույթ աղետների վաղ նախա- զգուշացման միասնական տարածաշրջա- նային համակարգ՝ Ասիայի և Աֆրիկայի տարածաշրջա- նի համար» ծրագիր ք. Բանգկոկ (Թաիլանդ)	Հիդրոմետ ծառայության և «Բազմաբնույթ աղետների վաղ նախազգուշացման միասնական տարածաշրջանային համակարգ՝ Ասիայի և Աֆրիկայի տարածա- շրջանի համար» ծրագրի միջև փոխըմբռնման հուշագրի շրջանակ- ներում մասնակցություն ծրագրի խորհրդի և այլ հանդիպումների աշխատանքներին, փոխայցելու- թյուններ, համատեղ ծրագրերի իրականացում, աշխատա- ժողովների կազմակերպում	ըստ պայմա- նավորվա- ծության և ֆինանսա- կան հնա- րավորու- թյունների	ըստ պայմա- նավորվա- ծության և ֆինանսա- կան հնա- րավորու- թյունների	ըստ պայմա- նավորվա- ծության և ֆինանսա- կան հնա- րավորու- թյունների
12.	Ֆրանսիա, ք. Թուլուզ,	«Մետեո-Ֆրանս» կազմակերպու- թյան հետ երկկողմ համագործակ- ցության քննարկում, համատեղ ծրագրերի իրականացում, փոխայցելություններ	ըստ պայմա- նավորվա- ծության և ֆինանսա- կան հնա- րավորու- թյունների	ըստ պայմա- նավորվա- ծության և ֆինանսա- կան հնա- րավորու- թյունների	ըստ պայմա- նավորվա- ծության և ֆինանսա- կան հնա- րավորու- թյունների
13.	ՀՕԿ-ի քարտու- ղարություն	ՀՕԿ-ի կամավոր համագործակցու- թյան ծրագրի շրջանակներում գործիք-սարքավորումների և ծրագրային փաթեթներ ձեռք բերելու ուղղությամբ աշխատանքների իրականացում	ըստ պայմա- նավորվա- ծության և ֆինանսա- կան հնա- րավորու- թյունների	ըստ պայմա- նավորվա- ծության և ֆինանսա- կան հնա- րավորու- թյունների	ըստ պայմա- նավորվա- ծության և ֆինանսա- կան հնա- րավորու- թյունների
14.		Ֆինանսական «Վայսալա» և ֆրանսիական «Սագիմ» ֆիրմաների հետ տեխնիկական հարցերով համագործակցության իրականացում	ըստ պայմա- նավորվա- ծության և ֆինանսա- կան հնա- րավորու- թյունների	ըստ պայմա- նավորվա- ծության և ֆինանսա- կան հնա- րավորու- թյունների	ըստ պայմա- նավորվա- ծության և ֆինանսա- կան հնա- րավորու- թյունների

			թյունների		
15.	Նորվեգիա, ք. Օսլո	Նորվեգիայի ջրի և էներգիայի կազմակերպության հետ երկկողմ համագործակցության քննարկում, համատեղ ծրագրերի իրականացում, փոխայցելություններ	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների
16.	Ըստ կայանալու վայրի	Մասնակցություն Միջերկրածովյան կլիմայի կանխատեսման և Հարավ-արևելյան Եվրոպայի կլիմայի կանխատեսման հերթական ֆորումների աշխատանքներին	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների
17.	ՌԴ, ք. Սանկտ Պետերբուրգ	Հիդրոօդերևութաբանական նմուշային սարքերի ստուգաճշտում և չափաբերում	ըստ ժամկետների	ըստ ժամկետների	ըստ ժամկետների
18.	ՌԴ, ք. Կիսլովոդսկ	Նմուշային ակտիվումների՝ ըստ ԳԳՕ-ի տարածաշրջանային ստանդարտի հերթական ստուգաբերման իրականացում	ըստ ժամկետների	ըստ ժամկետների	ըստ ժամկետների
19.	Գերմանիա, քաղ. Հոհեն-պայսենբերգ	Դոբսոնի սպեկտրոֆոտոմետրի հերթական ստուգաբերում՝ ըստ ստուգաբերման եվրոպական կենտրոնի ծրագրի		ըստ պայմանավորվածության	

## XII. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

18. Ծրագրի ֆինանսական ապահովումն իրականացվում է՝

- 1) Հիդրոմետ ծառայության համար յուրաքանչյուր տարվա համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված պետական աջակցության հաշվին.
- 2) ձեռնարկատիրական գործունեությունից Հիդրոմետ ծառայության ստացած եկամուտների հաշվին.
- 3) Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ ֆինանսական աղբյուրներից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ